

ՀՐԱԶԴԱՆԻ ԾՐՋԱՆԻ ԱԹԱՐԲԵԿՅԱՆ ԳՅՈՒՂԻ ՆՈՐԱԲԱՑ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՆԱՎԱԿԱՏԻՔՆ ՈՒ ՕԾՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Սույն թվականի օգոստոսի 16-ին, կիրակի օրը, Ս. Աստվածածնի Վերափոխման տոնին հանդիսավոր իրադրության մեջ՝ ձեռամբ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Արսեն եպիսկ. Բերբերյանի, կատարվել է Հրազդանի շրջանի նորաբաց և Ս. Աստվածածին եկեղեցու օծման արարողությունը:

Եկեղեցու Նավակատիքը կատարվել էր շաբաթ օրը, երեկոյան ժամերգությունից հետո, գլխավորությամբ առաջնորդական փոխանորդի օգնական տ. Գարեգին աբեղա Ներսիսյանի, մասնակցությամբ Երևանի եկեղեցիների քահանա հայրերի:

Կիրակի օրը, ժամը 10-ին, Տ. Արսեն եպիսկ. Բերբերյանը հանդիսավոր ս. պատարագ է մատուցում և կատարում է Ս. Աստվածածին եկեղեցու օծման արարողությունը:

Եկեղեցին ու շրջափակը լցվել էր հավատացյալների խուռներամ բազմությամբ:

Հանդիսությանը ներկա էին վրահայոց թեմի առաջնորդ տ. Գևորգ եպիսկ. Սերայդարյանը, Երևանի քահանայից դասը, Արարատյան թեմի թեմական խորհրդի, Ս. Աստվածածին եկեղեցու հոգաբարձության անդամները, եկեղեցու օծման երկու կնքահայրերը՝ Վազգեն Հովհաննիսյանն ու Հայկարամ Հովհաննիսյանը և այլ հրավիրյալներ:

Պատարագիչ Սրբազանը, հանդիսավոր մթնոլորտում, ըստ Մաշտոցի թելադրության, կատարում է նախ չորս Ավետարանիչների անունով՝ եկեղեցու չորս սյուների օծումը սրբալույս մեռոնով, ապա օծում՝ ավագ սեղանը, պատերը, նկարները:

Եկեղեցու օծման արարողությունից հետո, շարունակվում է սուրբ պատարագը մինչև քարոզի պահը:

Պատարագիչ Սրբազանի քարոզի բնաբանն էր Առաքել վարդապետ Դավրիժեցու սքանչելի ու ճշմարիտ վկայությունը օրվա հանդիսության հոգևոր խորհուրդը բացատրող. «Ի վերայ Աջոյն և սրբոյ Էջմիածնի Ամենայն ազգն Հայոց կապեալ կայ»: Տ. Արսեն սրբազանը իր քարոզի մեջ գեղեցկորեն վեր է հանում հայ ժողովրդի կյանքում ս. Էջմիածնի և մեր եկեղեցու կատարած հոգևոր, մշակութային, ազգապահպանման և հայրենասիրական դերն ու առաքելությունը, ինչպես անցյալում, նաև մեր օրերում, որպես «ճշմարիտ մի վերածնունդ հայ ժողովրդի հոգևոր ու բարոյական ուժերի, որոնք լավագույն ձևով ար-

Հրազդանի շրջանի Նորաբաց Սուրբ Աստվածածին եկեղեցին

Մի պահ եկեղեցու օծման հանդիսությունից

տահայտվեցին քրիստոնեական հավատքի հայկականացած հոգևոր մշակույթի ճանապարհով»:

Հավարտ ս. պատարագի կատարվում է նաև «օրհնութիւն խաղողոյ» կարգը ս. Աստվածածնի տոնի առիթով:

Ժամը 14-ին, օրվա հանդիսության առիթով, Հրազդանի ճաշարաններից մեկում տրվում է պաշտոնական ճաշկերույթ, որի ընթացքում բոլոր ներկաները բաժակ են բարձրացնում Հայոց Հայրապետի կենաց արևշատության, Մայր Աթոռ ս. Էջմիածնի անսասանության, Հայ Եկեղեցու պայծառության, հայոց վերածնված հայրենիքի հետագա բարգավաճման և հայ ժողովրդի՝ որ ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի, բարօրության և երկրագնդի վրա կայուն և հարատև խաղաղության համար:

Արարատյան Հայրապետական թեմի գործունեության պատմության մեջ օգոստոսի 16-ը արձանագրվում է նաև որպես կարևոր ու պատմական մի իրադարձություն: